վերայ, որից մի օրինակ տալիս ենք անմիջապէս (Պատկ. 9) գաղափար կազմելու համար։ Ապա զէպի աջ զոյգ լուսամուտների իրար միացած պսակների պայտաձեւ զարդաքանդակների մէջ իրար հետեւող թռչունների շարքը յիշեցնում են ասորական Բաբուլայի աւետարանի կամ մեր հին, Ժ. դարի աւետարանների կամարները, իրենց վերայի թռչուններով (Պատկ. 10), համեմատելի նաեւ Ապցի Դ. դարի դամբարանի դրան կենդանական քանդակների հետ, որոնց մասին խօսք կը լինի յետոյ։ Մծբինում Մար Յակոբ (Mar Jacoub) եկեղեցին, չինուած 338 կամ 359 թուին, ունի ձեւի կողմից զոյգ լուսամուտներ իրար կցուած, ինչպէս Պաղավանքում, բայց պսակների քանդակները տարբեր։* Անսովոր է նաեւ լուսամուտնե-



Պատկ. 10

րից բարձր գարնէզի զարդաքանդակը անօթների շարքից կազմուած։ Ապա արեւմտեան պատին հիւսիսային կողմի բարձր լուսամուտի պսակը շուշանածաղիկներից կազմուած, որ ինչպէս կը տեսնենք, սասանեան-հելլե-

*Strzygowski. L'ancien Art Chrétien de Syrie. պատկ. 87: Sarre und Herzfeld. Archeologishe Reise in Euphrat und Tigris-Gebiet. Band II. 342-343.